ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝
Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., դոց.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Իգիթ Ղարիբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:
Арман Егиазарян (редактор, д.и.н., доц.), **Арам Симонян** (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Артак Мовсисян** (д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Игит Гарибян** (д.и.н., проф.), **Генрих Абраамян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:
Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, associate prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Էդիկ Մինասյան – ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԳՈՐԾՈՒՄ (1941-1945 ԹԹ.) 8

***Эдик Минасян** – ВКЛАД АРМЯНСКОГО НАРОДА В ПОБЕДУ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941-1945 ГГ.).* 32

***Edik Minasyan** – THE CONTRIBUTION OF THE ARMENIAN PEOPLE TO THE VICTORY IN THE WORLD WAR II (1941-1945).* 33

Արտակ Մովսիսյան – ՀԱՅ ԷԹՆՈՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԻՆ (ԸՍՏ ՍՏՐԱԲՈՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) 34

***Артак Мовсисян** – ГЕОГРАФИЯ РАСПРОСТРАНЕНИЯ АРМЯНСКОГО ЭТНОСА НАКАНУНЕ НАШЕЙ ЭРЫ (ПО СВЕДЕНИЯМ СТРАБОНА)* 40

***Artak Movsisyan** – THE GEOGRAPHY OF THE SPREAD OF THE ARMENIAN ETHNOS ON THE EVE OF OUR ERA (ACCORDING TO STRABO)* 40

Միքայել Մալխասյան – ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԸՍՏ ԿԼԱՎԴԻՈՍ ՊՏՂՈՄԵՈՍԻ «ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ» 41

***Микаэл Малхасян** – ЗАПАДНЫЕ ГРАНИЦЫ ВЕЛИКОЙ АРМЕНИИ ПО "ГЕОГРАФИИ" КЛАВДИЯ ПТОЛЕМЕЯ.* 47

***Mikayel Malkhasyan** – THE WESTERN BORDERS OF GREATER ARMENIA IN CLAUDIUS PTOLEMY'S "GEOGRAPHY".* 47

Էդգար Վարշամյան – ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՌՈՄԵԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ. ԱՐՇԱԿ Բ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 49

***Эдгар Варшамян** – АРМЕНИЯ В РАЗГАР РИМСКО-ПЕРСИДСКОГО КОНФЛИКТА: ВНЕШНЯЯ ПОЛИТИКА АРШАКА II.* 60

***Edgar Varshamyan** – ARMENIA IN THE MIDST OF THE ROMAN-PERSIAN CONFLICT: THE FOREIGN POLICY OF ARSHAK II.* 61

Արգիշտի Վարդանյան – ՄԱՆՎԵԼ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱԿԱԼ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ 62

***Аргишти Варданян** – МАНВЕЛ МАМИКОНЯН – РЕГЕНТ И УПРАВЛЯЮЩИЙ ЦАРСТВОМ ВЕЛИКОЙ АРМЕНИИ.* 68

***Argishti Vardanyan** – MANVEL MAMIKONYAN – REGENT AND RULER OF THE KINGDOM OF GREATER ARMENIA.* 68

Արման Եղիազարյան – ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՌԱԿՏՄԱՆ ՊԱՏՃԱՌ ԴԱՐՁԱԾ ՄԻ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 70

***Арман Егиазарян** – О ЗАГОВОРЕ, ПРИВЕДШЕМ К РАСКОЛУ БАГРАТИДСКОГО ЦАРСТВА.* 79

***Arman Yeghiazaryan** – ON A CONSPIRACY THAT CAUSED THE SPLIT OF THE BAGRATUNIES KINGDOM.* 79

Արարատ Ստեփանյան – ՓԻԼԱՐՏՈՍ ՎԱՐԱԺՆՈՒՆՈՒ ՊԱՏՎԱՏԻՏՂՈՍՆԵՐԸ 81

***Арарат Степанян** – ПОЧЕТНЫЕ ТИТУЛЫ ФИЛАРЕТА ВАРАЖНУНИ.* 86

***Ararat Stepanyan** – THE HONORARY TITLES OF PHILARETOS BRACHAMIOS.* 86

Սեյրան Զաքարյան – ԱԶԳԻ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ (ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ ԵՎ ՂԱԶԱՐ ՋԱՀԿԵՑԻ).....88

***Сейран Закарян** – ПРОБЛЕМА ХАРАКТЕРИСТИКИ НАЦИИ В ХРИСТИАНСКОЙ ПАРАДИГМЕ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ (ГРИГОР ТАТЕВАЦИ И ГАЗАР ДЖАХКЕЦИ).*.....97

***Seyran Zakaryan** – THE PROBLEM OF CHARACTERIZATION NATION IN THE CHRISTIAN PARADIGM OF ARMENIAN IDENTITY (GRIGOR TATEVATSI AND GHAZAR JAHKETSI).*.....98

Սարգիս Բալդարյան – ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ-ՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ.....99

***Саркис Балдарян** – ЦИРКУЛЯЦИЯ КОММЕРЧЕСКИХ УЧЕБНИКОВ КОНСТАНТА ДЖУГАЕЦИ В ТОРГОВОЙ СЕТИ НОВОЙ ДЖУЛЬФЫ.*..... 106

***Sargis Baldaryan** – THE CIRCULATION OF COMMERCIAL HANDBOOKS OF CONSTANT OF JULFA IN THE TRADE NETWORK OF NEW JULFA.* 106

Արարատ Հակոբյան – 1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿՍՄԱՆ ՕՐՎԱ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (ՊԱՏԵՐԱԶՄԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ)..... 108

***Арарат Акопян** – К ВОПРОСУ О ДАТЕ НАЧАЛА ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 Г. (К 100-ЛЕТИЮ ВОЙНЫ).*..... 117

***Ararat Hakobyan** – ABOUT THE DATE OF THE BEGINNING OF THE TURKISH-ARMENIAN WAR IN 1920 (TO THE 100TH ANNIVERSARY OF THE WAR).*..... 117

Նելլի Մինասյան – 1920 ԹՎԱԿԱՆԻ ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՄԱ-ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ..... 118

***Нелли Минасян** – ТУРЕЦКО-АРМЯНСКАЯ ВОЙНА 1920 ГОДА И ПЛАНЫ ПАН-ТЮРКИЗМА.* 123

***Nelli Minasyan** – THE TURKISH-ARMENIAN WAR OF 1920 AND THE PROGRAMS OF PAN-TURKİSM.*..... 123

Սուրեն Ավետիսյան – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒ-ԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ..... 124

***Сурен Аветисян** – ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБЩЕСТВА КРАСНОГО КРЕСТА АРМЕНИИ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.* 131

***Suren Avetisyan** – THE ACTIVITY OF RED CROSS SOCIETY OF ARMENIA IN THE YEARS OF THE GREAT PATRIOTIC WAR.* 131

Առնակ Սարգսյան – ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈ-ՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ՀՀ 2018 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻ-ՆԱԿՈՎ)..... 132

***Арнак Саргсян** – УЧАСТИЕ В ИЗБИРАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ В РЕАЛИЯХ ДЕМО-КРАТИЗАЦИИ (НА ПРИМЕРЕ ВЫБОРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ В 2018 Г.).* 139

***Arnak Sargsyan** – PARTICIPATION IN THE ELECTORAL PROCESS IN THE REALITIES OF DEMOCRATIZATION (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA IN 2018 ELECTIONS).*..... 139

Գայանե Թովմասյան, **Ռուբիկ Թովմասյան** – ՁԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՅՈՒՐԸՆ-ԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ (ԱՇԽԱՐՀ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ)..... 140

***Гаяне Товмасян**, **Рубик Товмасян** – БУДУЩИЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРИЗМА И ИНДУСТРИИ ГОСТЕПРИИМСТВА В МИРЕ И В АРМЕНИИ.*..... 149

Gayane Tovmasyan*, *Rubik Tovmasyan *– FUTURE TRENDS OF TOURISM AND HOSPITALITY INDUSTRY DEVELOPMENT IN THE WORLD AND IN ARMENIA.* 149

Արշալույս Տետեյան – ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎԵՐՈՒՄ 150

Аршалуйс Тетеян *– ВОПРОС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН И ПРОБЛЕМА НАГОРНОГО КАРАБАХА В РЕЗОЛЮЦИЯХ ЕВРОПЕЙСКОГО ПАРЛАМЕНТА.* 156

Arshaluys Teteyan *– RECOGNITION OF ARMENIAN GENOCIDE AND NAGORNO-KARABAKH PROBLEM IN THE RESOLUTIONS OF EUROPEAN PARLIAMENT.* 156

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ՝ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆ (ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԱՆՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ) 157

Рафик Наапетян *– АРМЯНСКОЕ НАГОРЬЕ - ДРЕВНЕЙШИЙ ЦЕНТР СКОТОВОДЧЕСКОЙ КУЛЬТУРЫ (ПО АРХЕОЛОГИЧЕСКИМ МАТЕРИАЛАМ И АНТИЧНЫМ ПИСЬМЕННЫМ ИСТОЧНИКАМ).* 162

Rafik Nahapetyan *– ARMENIAN HIGHLAND - THE MOST ANCIENT CENTRE OF CATTLE BREEDING CULTURE (ACCORDING TO ARCHAEOLOGICAL MATERIALS AND ANCIENT WRITTEN SOURCES).* 162

Քրիստինա Այվազյան – ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ 163

Кристина Айвазян *– БЛАГОТВОРИТЕЛЬНОСТЬ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ.* 174

Christina Ayvazyan *– CHARITY IN THE ARMENIAN FAIRY TALES.* 175

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Գեղամ Ասատրյան, **Ավետիս Գրիգորյան** – ՄԱՔՐԱՎԱՆՔԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ (XII-XIV ԴԴ.) 176

Гегам Асатрян*, *Аветис Григорян *– ХАЧКАРЫ МАКРАВАНКА (XII-XIV ВВ.).* 181

Gegham Asatryan*, *Avetis Grigoryan *– THE CROSSTONES OF MAKRAVANK (XII-XIV CENTURIES).* 181

Մոնթե Մաթևոսյան – ՋՐԱՌԱՏԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉՔԱՐԵՐԸ 185

Монте Матевосян *– ХАЧКАРЫ ЦЕРКВИ СВЯТОГО КАРАПЕТА В ДЖРАРАТЕ.* 188

Monte Matevosyan *– THE KHACHKARS OF JRARAT ST. KARAPET CHURCH.* 188

Շուշանիկ Համբարյան – ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Հ[մր] 1970 ԱՎԵՏԱՐԱՆԸ ԵՎ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՈՒՇ ՇՐՋԱՆԻՆ ԲՆՈՐՈՇ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 191

Шушаник Амбарян *– РУКОПИСЬ № 1970 ЕВАНГЕЛИЯ ИЕРУСАЛИМА И ИКОНОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ МИНИАТЮР, ХАРАКТЕРНЫЕ ДЛЯ ПОЗДНЕГО ПЕРИОДА.* 199

Shushanik Hambaryan *– № 1970 GOSPEL OF JERUSALEM AND THE ICONOGRAPHIC FEATURES OF THE MINIATURES CHARACTERISTIC OF THE LATE-PERIOD.* 199

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Հրաձին Վարդանյան – ՍՓՅՈՒՌՔԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՍՓՅՈՒՌՔԸ..... 202
Грацин Варданян *– ТИПОЛОГИЯ ДИАСПОРЫ И АРМЯНСКАЯ ДИАСПОРА.* 207
Hratsin Vardanyan *– TYPOLOGY OF DIASPORAS AND THE ARMENIAN DIASPORA.* 208

Ալիկ Ղարիբյան, **Գայանե Գալստյան** – ՀՅԴ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ 209
Алик Гарибян, ***Гаяне Галстян*** *– НАЧАЛО ДЕЯТЕЛЬНОСТИ АРФ ДАШНАКЦУТЮН В США.* 214
Alik Gharibyan, ***Gayane Galstyan*** *– THE BEGINNING OF ARF DASHNAKTSUTYUN ACTIVITY IN THE USA.* 215

Էդգար Հովհաննիսյան – ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ 216
Эдгар Ованесян *– СОЗДАНИЕ ВОСКРЕСНЫХ ШКОЛ КИЛИКИЙСКОГО КАТОЛИКОСАТА И ИХ РОЛЬ В СОХРАНЕНИИ АРМЯНСКОЙ ИДЕНТИЧНОСТИ.* 225
Edgar Hovhannisyan *– THE FOUNDATION OF SUNDAY SCHOOLS OF THE CATHOLICOSATE OF THE GREAT HOUSE OF CILICIA AND THEIR ROLE IN PRESERVATION OF THE ARMENIAN IDENTITY.* 225

Մարիամ Հակոբյան – ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՒՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ. 226
Мариам Акопян *– ФОРМИРОВАНИЕ ЕПАРХИЙ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ В ГРЕЦИИ И ИХ АДМИНИСТРАТИВНО-ДЕМОГРАФИЧЕСКОЕ ОПИСАНИЕ В 1920-1930-Х ГГ.* 231
Mariam Hakobyan *– THE FORMATION OF THE GREEK-ARMENIAN DIOCESES OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH AND THEIR ADMINISTRATIVE-DEMOGRAPHIC DESCRIPTION IN THE 1920s AND 1930s.* 231

Նարինե Նուշերվանյան – «ՍՓՅՈՒՌՔ-ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՂ ԵՐԿԻՐ-ՀԱՅՐԵՆԻՔ» ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՌԱՆԿՅՈՒՆԱՁԵՎ ՄՈԴԵԼԸ 232
Нарине Нушерванян *– ТРЕХСТОРОНЯЯ МОДЕЛЬ ВЗАИМООТНОШЕНИЙ "ДИАСПОРА-ПРИНИМАЮЩАЯ СТРАНА-РОДИНА".* 240
Narine Nushervanyan *– "DIASPORA-HOST COUNTRY-HOMELAND" TRIANGULAR MODEL OF RELATIONS.* 241

Գևորգ Ղուկասյան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 242
Геворг Гукасян *– О ЛОББИСТСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ В ЗАПАДНОЙ ЕВРОПЕ.* 250
Gevorg Ghukasyan *– ON THE LOBBYING ACTIVITIES OF THE ARMENIAN DIASPORA IN WESTERN EUROPE.* 251

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Հայկազ Հովհաննիսյան, **Կարեն Բայրամյան** – ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԼԱՉԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՐԽԻՎԻՑ 252

Айказ Оганесян, Карен Байрамян *– НОВОВЫЯВЛЕННЫЕ ДОКУМЕНТЫ ИЗ АРХИВА ЛАЗАРЕВЫХ.* 261

Haikaz Hovhannisyan, Karen Bayramyan *– NEWLY REVEALED DOCUMENTS FROM THE LAZAREVS ARCHIVE.* 261

Հովիկ Գրիգորյան, Հայկ Մխոյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԵՎ ԼԵՈՅԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 262

Овик Григорян, Айк Мхоян *– ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА И ЛЕО.* 273

Hovik Grigoryan, Haik Mkhoyan *– FROM THE LETTERS OF DAVID ANANUN AND LEO.* 274

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Արա Հովհաննիսյան – ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ (ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ) 275

Ара Оганесян *– УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЕ ПРИНЦИПЫ И ОСОБЕННОСТИ КУРСА “ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ”.* 281

Ara Hovhannisyan *– EDUCATIONAL AND METHODOLOGICAL PRINCIPLES AND FEATURES OF THE COURSE “HISTORY OF ARMENIAN DIASPORA”.* 282

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW

Կարինե Եղիազարյան, Մերի Հովհաննիսյան. ЭДИК МИНАСЯН – ГЕРОИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНОК В ГОДЫ ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ КОНЦА XIX–НАЧАЛА XX ВЕКА, МОСКВА, «ЭДИТУС», 2020, 252 С 283

Էդիկ Մինասյան, Էդիկ Զոհրաբյան. ՀԵՆՐԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ (1956 Թ. ՓԵՏՐՎԱՐ – 1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ), Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2019, 398 ԷՋ 286

Վալերի Թունյան, Արա Հովհաննիսյան. «ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ, ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ», ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ /ԿԱԶՄՈՂ Է. ՄԻՆԱՍՅԱՆ/, Ե., ԵՊՀ ՀՐԱՏ., 2020, 212 ԷՋ 288

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 290

INFORMATION ABOUT THE AUTHORS 292

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 294

NOTICE FOR THE AUTHORS 294

Էդգար Վարշամյան

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՌՈՄԵԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԾԻՐՈՒՄ. ԱՐՇԱԿ Բ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնաբառեր. *հայ-հռոմեական հարաբերություններ, հայ-պարսկական հարաբերություններ, հռոմեա-պարսկական հակամարտություն, Արշակ Բ, Կոստանդիոս Բ, Շապուհ Բ, արտաքին քաղաքականություն, Հայաստան:*

ՄՈՒՏՔ

Հայ ժողովրդի պատմության մեջ իր գործունեությամբ առանձնանում է Արշակ Բ Արշակունին (350-368 թթ.): Նրա արտաքին և ներքին քաղաքական ձեռքբերումները տարբեր պատմական ժամանակաշրջաններում ընկալվել է նորովի՝ պայմանավորված և՛ ժամանակի պահանջներով և՛ հետազոտողի սուբյեկտիվ վերաբերմունքով: Հետազոտողների մի մասը, վերապահությամբ ընդունելով Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի և այլ պատմիչների հաղորդումներն ու վերանայելով նրանց գնահատականները Արշակ Բ-ի մասին, փորձել են նոր լույսի ներքո քննել ու բացահայտել հայոց թագավորի վարած արտաքին քաղաքականությունը, ինքնուրույն պետություն կառուցելու ծրագիրը: Ասվածի համատեքստում քննարկելի են հայ-հռոմեական հարաբերությունները Արշակ Բ-ի օրոք: Արշակ Բ-ի հարաբերությունները Հռոմի հետ հնարավորինս ամբողջական և համակողմանի բացահայտելու համար անհրաժեշտ է նրան ներկայացնել հայ և օտարալեզու պատմագրության տեղեկությունների համապատկերում՝ հիմնական թիրախ ունենալով արտաքին քաղաքական անցուդարձերը:

Արշակ Բ-ի հարաբերությունները Հռոմի հետ արտացոլվել են հայ և օտարազգի պատմիչների երկերում: Այդ հարաբերությունների բնույթի մասին մեզ տեղեկություններ են հաղորդում պատմիչներ Մովսես Խորենացին[1], Փավստոս Բուզանդը[2], Վարդան Արևելցին[3], Ամմիանոս Մարկելինոսը[4]: Վերոնշյալ պատմիչների հաղորդած տեղեկություններն անգնահատելի սկզբնաղբյուր են հիմնախնդրի ուսումնասիրության համար: Արդի գիտական գրականության մեջ հիմնախնդրին այս կամ այն չափով անդրադարձել են Լեոն[5], Հ. Մանանդյանը[6], Ե. Մուրադյանը[7], Հ. Աստուրյանը[8], Հ. Հարությունյանը[9], Ն. Շահնազարյանը[10] և այլք:

Արշակ Բ-ի վարած արտաքին քաղաքականության մասին պարզաբանումներ մտցնելու համար անհրաժեշտ է դիտարկել արտաքին քաղաքական իրադրությունը Արշակ Բ-ի գահակալության սկզբում, նրա վարած արտաքին քաղաքականությունը և դրա ազդեցությունը Հայաստանի քաղաքական կյանքի վրա:

** Հոդվածը ներկայացվել է 02.03.2020 թ., գրախոսվել՝ 23.04.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.06.2020 թ.:*

[1] *Տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1981:*

[2] *Տե՛ս Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց, Ե., 1987:*

[3] *Տե՛ս Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, Ե., 2001:*

[4] *Տե՛ս Аммианъ Марцелинъ, История, выпускъ I, II, III, Киевъ, 1906-1908.*

[5] *Տե՛ս Լեո, Երկերի ժողովածու, հ. Ա, Ե., 1966:*

[6] *Տե՛ս Մանանդյան Հ., Երկեր, հ. Բ, Ե., 1978:*

[7] *Տե՛ս Մուրատեան Ե., Քննական պատմութիւն Արշակ Երկրորդի եւ անոր Պապ որդւոյն, Աղեքսանդրիա, 1900:*

[8] *Տե՛ս Աստուրեան Հ., Քաղաքական վերաբերութիւններ ընդմէջ Հայաստանի և Հռովմայ 190 էն ն. Ք. մինչեւ 428 յ. Ք., Վենետիկ, 1912:*

[9] *Տե՛ս Հարությունյան Հ., Հայաստանը Արշակունիների ժամանակ (1-429 թ. թ.), Ե., 1945:*

[10] *Տե՛ս Շահնազարյան Ն., Հայ-իրանական և հայ-հռոմեական հարաբերությունները հայ մատենագիրների լուսաբանությամբ (մ. թ. ա. VI դ. – մ. թ. V դ.), Ե., 1990:*

ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԱՐՇԱԿ Բ-Ի ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

350 թ. Հռոմում բռնկվեցին ներքին գահակալական կռիվները: Դեռևս 340 թ. Կոստանդիոսի կրտսեր եղբայր Կոստասը իրեն կայսր էր հռչակել Գալլիայում: Սակայն 350 թ. Կոստասի թիկնապահ զորամասի հրամանատար Մագնենտիոսը, սպանելով նրան, գրավել էր գահը: Այդ լուրը լսելով՝ Կոստանդիոսը մի զորաբանակով արշավեց Իտալիա: 353 թ. Կոստանդիոսը պարտության է մատնում Մագնենտիոսին և ընդհանրապես իր բոլոր հակառակորդներին ու դառնում Հռոմի կայսր[1]: Պարսից արքա Շապուհը (309-379 թթ.) քաջատեղյակ լինելով Հռոմում տեղի ունեցող իրադարձություններին և օգտվելով հարմար պահից, 350 թ., երբ Կոստանդիոսը գտնվում էր Եվրոպայում, սկսում է ռազմական գործողություններն ինչպես Միջագետքում, այնպես էլ Հայաստանում: Պարսկական զորքերը պաշարում են Մծբինը: Պաշարումը տևեց երեք ամիս և պարսկական զորքերը հազարավոր զոհեր տվեցին: Նույն ժամանակ պարսկական մի բանակ ներխուժեց Հայաստան: Պարսիկներին հաջողվեց գերել հայոց թագավոր Տիրանին (339-350 թթ.) և տեղափոխել Տիզբոն, որտեղ հետագայում նրան կուրացրին[2]: Այս դեպքի պատճառը Հ. Աստուրյանը համարում է Տիրանի՝ Կոստանդիոսին օգնական զորքեր տրամադրելը[3]: Կոստանդիոսն իր գործերը Հռոմում կարգավորելուց հետո ուղևորվեց Արևելք: Հռոմեական և պարսկական ուժերը 352 թ. հանդիպեցին Բասենում, որտեղ տեղի ունեցավ մի խոշոր ճակատամարտ և ավարտվեց պարսկական ուժերի պարտությամբ: Բասենի ճակատամարտից հետո կնքվում է զինադադար: Ինչպես երևում է զինադադարի պայմանները մեզ հաղորդող աղբյուրի՝ Ամմիանոսի վկայություններից, պարսիկները վերադարձրին Հայաստանից ու հռոմեական արևելյան տիրապետություններից հափշտակած գույքը և կատարեցին գերիների փոխանակություն: Պարսկաստանից վերադարձող գերիների մեջ է լինում նաև կուրացած թագավոր Տիրանը, բայց քանի որ նա ի վիճակի չէր կառավարելու երկիրը, ուստի թագավորական գահն ստանում է նրա որդի Արշակ Բ-ը[4]: «Արևելից և Արևմտից մրցման այս տարբեր կերպարանաց ներքո,– նշում է Ե. Մուրադյանը,– միշտ միևնոյն ոգին, նոյն նպատակ կ'ընդնշմարուի.– վաճառականութեան նիւթական բարեկեցութեան ընդարձակումը եւ պաշտպանութիւնը մէկ կամ միւս կողմէն»[5]: Թերևս այսպիսի վայրիվերոյումներով լեցուն մի ժամանակաշրջան էր նաև Դ դարի քաղաքական պատմությունը, երբ երկու հզոր տերություններ (Հռոմը և Սասանյան Պարսկաստանը) հակամարտում էին գերազանցության հասնելու մեկը մյուսի նկատմամբ: Արշակունյաց Հայաստանը թեև այդպիսի մեծ տերություն չէր, սակայն ուներ ռազմական մեծ ներուժ և հակամարտող կողմերից որևէ մեկի կողմն անցնելուն պես կարող էր ուժերի հավասարակշռության մեջ էական տարբերություն առաջացնել: Խոսելով պարսկա-հռոմեական հակամարտության մասին՝ Հ. Մանանդյանը նշում է, որ Արշակունիների թագավորության բարեկամական կամ թշնամական դիրքը դեպի կռվող կողմերը ստանում էր բացառիկ մեծ կարևորություն[6]: Հիրավի, ճշմարտության մասնիկ առկա է Հ. Մանանդյանի այդ խոսքերի մեջ:

Անհրաժեշտ է արձանագրել, որ Արշակ Բ-ն այս հակամարտության համատեքստում ներկայանում էր որպես պատերազմի գիտակ և միանգամայն շրջահայաց թագավոր և, ինչպես նշում է Ե. Մուրադյանը, «Չուզեց այս երկու մեծ ոսոխներէն միոյն կամ միւսին կողմն հակիլ՝ այլ իւր զօրութեան կրթնաց՝ չեզոք կեցաւ՝ զինքն պատկառելի ըլնելու՝ և իւր վճռող սուրը ի դէպ ժամանակի՝ պատերազմի կշռոյն մի կամ միւս նժարին մէջ նետելու համար»[7]: Սա փաստում է, որ մենք գործ ունենք այնպիսի պատմական կերպարի հետ, ըստ որի՝ պետական շահը գերակա էր այս հակամարտության մեջ:

---

[1] *Տե՛ս Аммианъ Марцелинъ, в. I, 1906, XIV, 5.*
[2] *Տե՛ս նույն տեղում, XIV, 3:*
[3] *Տե՛ս Աստուրեան Հ., նշվ. աշխ., էջ 280:*
[4] *Տե՛ս Аммианъ Марцелинъ, в. I, XIV, 8.*
[5] *Մուրատեան Ե., նշվ. աշխ., էջ 14:*
[6] *Տե՛ս Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 169:*
[7] *Մուրատեան Ե., նշվ. աշխ., էջ 25:*

Բասենում կրած ծանր պարտությունից հետո Շապուհը որոշեց օրակարգից ժամանակավորապես հանել Հռոմի ու Հայաստանի վրա հարձակվելու իր մտադրությունը, իսկ արևմուտքում աշխուժացան կայսրության թշնամիները, և Կոստանդիոսը զբաղված էր նրանց չեզոքացնելու գործով: 350-ական թթ. Հռոմը և Պարսկաստանը, զբաղված սեփական սահմանների պաշտպանության խնդրով, ժամանակավորապես չեն միջամտում Հայաստանի ներքին գործերին: Փավստոս Բուզանդը դրական է արտահայտվում Արշակի գահակալության առաջին տարիների մասին: Արշակը վարում է ազգանպաստ, կշռադատված քաղաքականություն, կարճ ժամանակում բարեկարգում ու շենացնում է երկիրը, ամրացնում և հսկողություն է հաստատում Հայաստանի սահմանամերձ շրջաններում՝ հրաշալի ըմբռնելով, որ ուժեղ պետություն կառուցելու գլխավոր նախապայմանը միաբանությունն է: «Եւ նորոգեցաւ զուարթացաւ տէրութիւնն թագաւորութեանն Հայաստան երկրին որպէս և զառաջինսն. մեծամեծքն յիւրաքանչիւր գահու, և գործակալքն յիւրաքանաչյուր գահու, և գործակալքն յիւրաքանչիւր չափու»[1],– գրում է Փավստոս Բուզանդը:

ԱՐՇԱԿ Բ-Ի ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՍՏԱՆԴԻՈՍ Բ ԿԱՅՍԵՐ ՀԵՏ

Կոստանդիոս Բ կայսեր (337-361 թթ.) կառավարման շրջանում Արշակ Բ-ը ձգտում էր հարաբերությունները կարգավորել կայսրության հետ: Նա հատուկ դեսպանություն ուղարկեց կայսեր մոտ նոր կաթողիկոս ձեռնադրված Ներսեսի առաջնորդությամբ, որպեսզի կայսեր ու իրենց միջև եղած համաձայնության ու խաղաղության դաշինքը նորոգեն (խոսքը Կոստանդիանոս Մեծի և Տրդատ Մեծի միջև կնքված հատուկ պայմանագրի մասին է, որով ավելի ամրապնդվեց բարեկամությունը երկու երկրների միջև-Է.Վ.)[2]: Հետազոտողները նշում են, որ պատվիրակության այցը Հռոմ հավանաբար տեղի է ունեցել 353 և 357 թ թ. միջև:

Մովսես Խորենացու մոտ կա մի տեղեկություն, ըստ որի՝ Հռոմի Վաղենտիանոս կայսրը (իմա՛ Կոստանդիոս Բ-ը) թուղթ է գրում Արշակին. «Պարտ էր քեզ յիշել զչարիսն, որ անցին ընդ ձեզ յանաստուածիցն Պարսից, եւ զերախտիսն՝ որ ի մէնջ ի վաղնջուց մինչեւ ցքեզ, եւ հեռանալ ի նոցանէ եւ մօտել ի մեզ: Որպէս զի խառնեալ ընդ զօրս մեր՝ մարտիցես ընդ նոսա, եւ հանդերձ գոհացողական թղթովք մերոց զօրավարացդ առաքեսցես զհարկս աշխարհիդ. Եւ առեալ զեղբայրս քո, եւ որ ընդ սմա վտարանդիքս՝ ի բաց ածցեն: Ողջ լեր ամենայն հնազանդութեամբ Հռոմայեցւոց տէրութեանս»[3]: Մովսես Խորենացու վերոնշյալ հաղորդումից երևում է, որ ի թիվս մի շարք կետերի, կայսրը Հայոց թագավորից պահանջում էր իր երկրի հարկերը, նշելով, որ հետ կվերադարձնի Հռոմում եղած պատանդներին: Ասվածը հիմք է տալիս ենթադրելու, որ չնայած Հայոց թագավորությունն անկախ էր և չէր գտնվում Հռոմի տիրապետության տակ, այնուամենայնիվ, որոշակի քանակությամբ հարկ է վճարելիս եղել կայսրությանը: Իսկ Հռոմում գտնվող պատանդներն էին Հայոց թագավորի եղբայր Տրդատը և վերջինիս երկու որդիները՝ Գնելն ու Տիրիթը:

Համաձայն Մովսես Խորենացու հաղորդած տեղեկությունների՝ Հայոց թագավորը չի պատասխանում կայսեր այդ նամակին և արհամարում է նրան, բայց միևնույն ժամանակ չի մտերմանում նաև Շապուհի հետ: Պատմիչի այս տեղեկությունը ցույց է տալիս, որ հանձինս Արշակի՝ մենք գործ ունենք շրջահայաց գահակալի հետ, ով հարկն եղած դեպքում կարողանում էր պաշտպանել իր պետության շահերը:

Պատգամավորները վերադառնալով Հռոմ կայսրին տեղեկացրին Հայոց թագավորությունն արտաքին ազդեցությունից զերծ պահելու Արշակ Բ-ի քաղաքականության մասին: Կոստանդիոսը զայրանալով իր զորավարներից Թեոդոսին հրամայեց արշավել Հայաստան: Արշակ Բ-ը խնդիրը կարգավորելու համար հռոմեացիների մոտ ուղարկեց Ներսես կաթողիկոսին: Իսկ ինչու՞ պատվիրակությունը գլխավորեց Ներսես կաոողիկոսը: Չնայած այն հանգամանքին, որ պատմիչներն այս առթիվ ոչինչ չեն նշում, այնուամենայնիվ, կարծում ենք, որ Ներսես կաթողիկոսի կողմից պատվիրակության գլխավորումը կարող էր պայմանավորված լինել Հռոմի՝ որպես քրիստոնեա-

[1] *Փավստոս Բուզանդ, էջ 106:*
[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 126:*
[3] *Տե՛ս Մովսես Խորենացի, էջ 256-257:*

կան երկրի իրողության հետ: Այս համապատկերի վրա Ներսես կաթողիկոսը էական դերակատարություն ձեռք բերեց պետության արտաքին հարաբերություններում: Դրա վառ օրինակը՝ Հռոմում ձերբակալվելու և աքսորվելու միջադեպին Հայոց թագավորի արձագանքն էր: Հռոմում Հայոց կաթողիկոսը դավանաբանական վեճի բռնվեց կայսեր հետ, որի պատճառով նրան ձերբակալեցին ու աքսորեցին[1]: Փավստոս Բուզանդը վկայում է, որ այդ ժամանակ հռոմեական կայսրը մոլորվել էր իր հավատից և ընկել էր արիանոսների[2] հերետիկոսության մեջ: Երբ կայսրը հայոց կաթողիկոսին և մյուս պատգամավորներին տեսավ՝ սկզբում մեծ փառքով ու շքեղությամբ նրանց մեծարեց: Կայսրը մի որդի ուներ, որը ծանր հիվանդությամբ էր տառապում: Կոստանդիոսը ստիպում էր հայոց կաթողիկոսին, որ երեխայի վրա աղոթք կատարի: Պատմիչը վկայում է, որ Ներսեսը մեջտեղ գալով սկսեց խոսել և ասաց. «Արդ եթէ զայս այսպէս հաւատասցես եթէ Քրիստոս որդի և ծնունդ է աստուծոյ, որովք և բազմօք և անթիւ վկայութեամբ կարեմք հաճել զքեզ, և լուանալ զքեզ ի սուտ և ի պիղծ մկրտութենէ հերետիկոսութեանն հաւատոց. Եւ ընկալ դու զմկրտութիւն սրբութեանն հաւատոցն ի շնորհս յանուն Հօրն արարչին, և ի խոստովանութիւն ծննդեան Որդւոյն ի Հօրէ, որ է յառաջ քան զյաւիտեանս և զժամանակս, որ է ըստ բնութեանն գոյացութեան իւրոյ...»[3]: Ներսես կաթողիկոսը այնուհետև ավելացրեց, որ որդուն բուժելու համար կայսրը պետք է վերադառնա ճշմարիտ ուղղափառ հավատին: Այս բոլորն ուշադիր լսելուց հետո կայսրը զայրացավ ու հրաման տվեց երկաթե կապանքներով պինդ կապել Հայոց կաթողիկոսին և բանտ տանել նրան: Այս դեպքից տասնհինգ օր անց երեխան մեռավ, և կայսրը հրաման տվեց Ներսեսին բերել իր առաջ ու մեղադրեց. «ի ձէ՞նջ քրիստոնէից եղև մանկանն մեռանել: Իսկ նա ետ պատասխանի, և ասէ. Հնգետասան օր յետ բանիցն եղելոյ երկարեաց Քրիստոս, թերևս դարձջիք. իսկ իբրև ոչ դարձայք, սատակեցայք»[4]:

Կայսրը սկզբում ցանկանում էր նրան մահապատժի ենթարկել, սակայն նրան զգուշացրին. «ապա մատուցեալք առ թագաւորն աւագք իւրոյ դրանն և խորհրդականք, և ասեն ցկայսրն՝ եթէ յօտար և ի հեռաստան երկրէ վասն որոյ յղեալ զդոսա հզօր թագաւորի, և մեծի տեառն հրեշտակք են, մի՛ ինչ լիցի դոցա վնաս ի մէնջ. Եթէ ոչ, մեծ պատերազմ յառնելոց է ընդ մեզ և ընդ մեծ թագաւորն Հայոց, և մեծ թշնամութիւն ի մէջ անգանելոց է...զի ոչ երբէք ուրեք ի հնոց ժամանակաց հետէ, թող թէ այր մեծ և աւագ և աշխարհի միոյ գլուխ: Զի թագաւորն դոցա աշխարհին և դա, որպէս ասեն, ընդ մի համար են. և ասեն՝ թէ աշխարհն այն, ուստի դոքա եկեալ են, սիրեն զայրդ»[5]: Թեև կայսրը Ներսես կաթողիկոսին ազատ չարձակեց, սակայն, հրաման տվեց Հայոց կաթողիկոսին աքսորել: Փոխարենը Ներսեսի հետ մեկնածներին, ինչպես նաև Արշակ Բ-ի՝ Հռոմում պատանդ պահվող եղբորորդիներին՝ Գնելին ու Տիրիթին, մեծամեծ նվերներով ուղարկեց Հայաստան: Նա հորդորում էր հայոց թագավորին՝ իրեն չմեղադրել կատարվածի համար[6]:

Երբ Արշակ Բ-ն ստացավ նամակը, բարկացավ ինչպես կայսեր արածի, այնպես էլ իր նախարարների վրա, որ կայսեր նվիրած գանձերը (ոսկի, արծաթ, թանկագին ակներ-Է.Վ.) բերել են իրեն: «Քարինք բազումք, ասէ, ի վերայ կայսերն, և ձեր ի բերելդ. Քարինք և մեր շատ կան ի թափել զատամունս նորա ի տալն, և ձեր ի բերելդ»[7]: Հայոց թագավորն ասում էր, որ նման անպատվությանը չի դիմանա և վրեժխնդիր կլինի: «Տայր հրաման Վասակայ իւրում զօրավարին զօր ժողովել, զգունդս բովանդակել, ելանել հարկանել եւ աւար առնուլ զկողմանս Գամրաց (Կապադովկիա-Է.Վ.): Իսկ զորավարն սպարապետն Վասակ, վաղվաղակի զտուեալ հրամանս նորա կատարէր. զզօրս բազումս իբրեւ զերկերոյր եւ զվաթսուն հազարաց ի մի վայր կուտէր. հարկանէր աւար առնոյր զկողմանս Գամրաց մինչեւ ի քաղաքն յԱնկուրացւոց. զվեց ամ զմիմեանց զհետ աւերէր

[1] Տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 126-142, տե՛ս նաև Վարդան Արևելցի, էջ 82-83:

[2] Արիոսական՝ Արիոսի աղանդին հետևող: Արիոսը Աղեքսանդրայի եկեղեցու երեց էր, որ ուսուցանում էր, թե երրորդության երկրորդ անձը, որդին, ստեղծված է հորից՝ ոչնչից, ուրեմն ժամանակով կրտսեր է նրանից, նա արարած է և ոչ ծնունդ: Նա «որդի աստուծո» է կոչվում այն իմաստով, ինչպես շատ մարդիկ էլ կոչված էին Ս. գրքում: Կոստանդիոս կայսրն էլ Արիոսի աղանդի բավմաթիվ կողմնակիցներից մեկն էր:

[3] Փավստոս Բուզանդ, էջ 126:

[4] Նույն տեղում:

[5] Նույնը:

[6] Տե՛ս նույնը:

[7] Նույն տեղում, էջ 164:

զաշխարհի սահմանացն Յունաց: Լցան աւարաւ բազմաւ եւ պէսպէս մեծութեամբ, բռնութեամբ սաստիւ մեծաւ թշնամութեամբ ընդ կոմանս ընդ այնոսիկ»,– գրում է Փավստոս Բուզանդը[1]: Հատկանշական է, որ ժամանակակից լատին պատմագիր Ամմիանոս Մարկելինոսը այսպիսի կարևոր իրադարձության մասին ընդհանրապես չի խոսում, բավարարվելով միայն նշել, որ հայոց զորավար Արշակը հավատարիմ մնաց Հռոմեական կայսրության հետ դաշնակցությանը[2]: Այնինչ պետության շահերի դեմ ուղղված այդ քայլի համար հայոց թագավորը արժանի հակահարված հասցրեց Հռոմին: Հայկական զորքերը Վասակ սպարապետի հրամանատարությամբ վեց ամիս շարունակ ավերածություններ կատարեցին Հռոմի արևելյան տարածքներում՝ հասնելով մինչև Անկարա: Հայկական զորքը ասպատակեց այդ տարածքները և մեծ ավարով հետ վերադարձավ:

Ա. Եղիազարյանը նշում է, որ այդ հարվածը հասցվել էր պետության հեղինակությանը, և հասկանալի է՝ չէր կարող վճռական քայլերի չմղել Արշակ Բ-ին[3]: Կարծում ենք, որ Արշակ Բ-ի այս քայլը լուրջ հակազդեցություն էր Հռոմին, ցույց տալու համար, որ հանձինս Արշակի նրանք գործ ունեն հզոր և իր պետության շահերը պաշտպանող գահակալի հետ: Եվ ամենևին պատահական չէ, որ Հռոմի արքունիքում այդ մասին նախապես զգուշացնում էին հռոմեական կայսրին՝ գիտակցելով այդ քայլի ծանր հետևանքները:

350-ական թ թ. երկրորդ կեսից տարածաշրջանում կրկին սրվում են պարսկա-հռոմեական հարաբերությունները: Սա թերևս Արշակունյաց հարստության այս գահակալի համար ամենաբախտորոշ ժամանակաշրջանն էր: 356-358 թ թ. ընթացքում Հռոմի և Պարսկաստանի միջև տեղի են ունենում բանակցություններ՝ գալիք պատերազմը կանխելու նպատակով[4]: Բանակցությունների ընթացքում Շապուհ Բ Երկարակյացը (309-379 թթ.) Հռոմից պահանջում է հետ վերադարձնել Միջագետքն ու Հայաստանը՝ նշելով, որ այդ տարածքները հռոմիացիները խլել են իր պապից: Շապուհ Բ-ի այս պահանջը կայսր Կոստանդիոս Բ-ը մերժում է, հավելելով, որ անհրաժեշտ է պահպանել Հայաստանում և Միջագետքում առկա ստատուս քվոն[5]: Ստանալով Կոստանդիոսի մերժումը, Շապուհ Բ-ը 359 թ. վերսկսում է ռազմական գործողությունները Հռոմի դեմ: Այս պատերազմում, ինչպես վկայում է Ամմիանոս Մարկելինոսը, Շապուհի դաշնակիցներն էին Խիոնիտների թագավոր Գրումբատը և աղվանաց թագավորը[6]: Այս համատեքստում Արշակ Բ-ի համար արտաքին քաղաքականության վեկտորի ճիշտ ընտրությունը դարձել էր օրապահանջ: Այս հակամարտության մեջ կողմերից յուրաքանչյուրը աշխատում էր Հայաստանին իր դաշնակիցն ու բարեկամը դարձնել: Այս մասին կարևոր տեղեկություններ ունեն և՛ Փավստոս Բուզանդը, և՛ Ամմիանոսը:

Ամմիանոսը վկայում է, թե հռոմիացիներին քաջ հայտնի էր, թե պարսիկներն ինչպիսի խաբեությամբ, սպառնալիքների և նենգության են դիմում, որպեսզի Արշակին կտրեն Հռոմից[7]: Կարծում ենք, որ Արշակ Բ-ը շատ լավ գիտակցում էր իրադրության ողջ բարդությունը: Այս համատեքստում հայոց թագավորը գտնում էր, որ Հռոմի հետ դաշնակցելն է ճիշտ որոշումը:

Հռոմում իր գործերը կարգավորելուց հետո, 360 թ. Կոստանդիոս Բ-ը, բանակի գլուխ անցած, ժամանում է Կապադովկիայի Կեսարիա քաղաքը: Հայոց թագավոր Արշակը կայսրից հրավեր է ստանում գալ իր մոտ Կեսարիա: Այս մասին մեզ տեղեկություններ է հաղորդում դեպքերին ժամանակակից պատմագիր Ամմիանոս Մարկելինոսը: Կոստանդիոսը Կեսարիայում տեսակցություն ունեցավ Արշակ Բ-ի հետ: Ամմիանոսի վկայությամբ, Արշակի և Կոստանդիոսի տեսակ-

---

[1] *Նույնը:*

[2] *Տե՛ս Аммиань Марцелинь, в. II, XX, 11.*

[3] *Տե՛ս Եղիազարյան Ա., Հայոց պետականության պատմության ուսանելի էջերից. Արշակ Բ-ի դարաշրջանը, «Գիտական Արցախ», 2018, № 1, էջ 17:*

[4] *Տե՛ս R. Seager, Perceptions of Eastern Frontier Policy in Ammianus, Libanius, and Julian (337-363), The Classical Quarterly, 1997, v. 47, № 1, p. 253-255.*

[5] *Տե՛ս Аммианъ Марцелинъ, в. I, 1906, XVII, 5, տե՛ս նաև B. Dignas and E. Winter, Rome and Persia in Late Antiquity: Neighbours and Rivals, New York, 2007, p. 90.*

[6] *Տե՛ս նույն տեղում, XIX, 7.*

[7] *Տե՛ս Аммиань Марцелинь, в. II, XX, 11.*

ցությամբ ավելի ամրապնդվեց հայ-հռոմեական բարեկամությունն ու ռազմական համագործակցությունը[1]: Բացի տարբեր ընծաներից ու շնորհումներից, Կոստանդիոսը Արշակին կնության է տալիս իր մահացած եղբոր՝ Կոստասի նախկին նշանածին՝ Օլիմպիային[2]:

Մովսես Խորենացին և Փավստոս Բուզանդը վկայում են, որ կասկածամիտ կայսրն Արշակից երաշխավորություն պահանջեց: Հայոց թագավորը ստիպված էր իր ութամյա Պապ որդուն և մի շարք ազդեցիկ մեծամեծերի երեխաների որպես պատանդներ Ներսես կաթողիկոսի միջոցով ուղարկել Հռոմ[3]: Կայսրի այս կասկածամտությունը և Հայոց թագավորի կողմից պատանդներ ուղարկելն ուներ իր պատճառը: Բանն այն է, որ մինչ կայսրի Արևելք ժամանելը, հայկական զորքերը պարսիկների հետ համատեղ ռազմական գործողություններ էին իրականացրել Միջագետքում: Կարծում ենք, որ կայսրի կողմից պատանդներ պահանջելը պայմանավորված էր այս իրողությամբ, և կարող էր զսպող հանգամանք լինել՝ հետագայում Հայոց թագավորին նման մտադրությունից հետ պահելու համար:

Այս դեպքերից որոշ ժամանակ անց Կոստանդիոս Բ-ը Փոքր Հայքից գնաց Ասորիք և Անտիոք քաղաքը դարձրեց իր նստակայանը: Չնայած Կեսարիայում տեսակցություն էր ունեցել Արշակի հետ, այնուամենայնիվ Ամմիանոսի վկայությամբ, կայսրի կասկածամտությունը հարկադրեց նրան Անտիոքից թանկարժեք նվերներ ու գոհարազարդ պատմուճաններ ուղարկել Արշակին ու Վրաստանի թագավոր Միհրանին, քանի որ վերջինս մեծ երկյուղ էր զգում, իբր Շապուհը կարող է նրանց իր թակարդը գցել[4]:

Մինչ Կոստանդիոսը զբաղված էր Արևելքում գործերի կարգավորմամբ՝ Հռոմում ներքաղաքական պայքարը կրկին սրվում է: Կայսրի հորեղբոր որդի Հուլիանոսը պարտության էր մատնել գերմանական ցեղերին: Կայսրը կասկածում էր, որ Հուլիանոսը կարող է զենքն ուղղել իր դեմ և տիրել հռոմեական գահին: Ուստի Կոստանդիոսը պահանջեց Հուլիանոսից իր լեգեոններն ուղարկել Արևելք՝ Շապուհի դեմ պատերազմելու: Սակայն Հուլիանոսի լեգեոնները մերժեցին Կոստանդիոսի պահանջը և մեծ խանդավառությամբ Հուլիանոսին կայսր հռչակեցին: Այս հանգամանքը ստիպեց Կոստանդիոսին վերադառնալ Հռոմ՝ Հուլիանոսի ապստամբությունը ճնշելու: Սակայն Կոստանդիոսը ճանապարհին հիվանդացավ և 361 թ. վախճանվեց Մոմփսուեստ քաղաքում: Հռոմում նոր կայսր հռչակվեց Կոստանդիոսի հորեղբոր որդին՝ Հուլիանոսը (361-363 թթ.), որը քրիստոնեական եկեղեցու դեմ մղած պայքարի պատճառով ստանում է «Ուրացող» մականունը[5]: Ջ. Հարրելը նշում է, որ Կոստանդիոս Բ-ի Հռոմ վերադարձից հետո, պարսկական զորքերը տարածաշրջանում հաջողություններ էին գրանցել, և միայն Հայաստանն էր, որ պահպանել էր իր անկախությունը պարսկական տիրապետությունից[6]:

Արշակ Բ-ի հարաբերությունները Հռոմի կայսր Կոստանդիոս Բ-ի հետ հետաքրքիր էվոլյուցիա ունեցան: Այս հարաբերությունները, կարծում ենք, սկզբնական շրջանում իրենց մեջ որոշակի լարվածություն էին պարունակում, ինչին նպաստում էր Արշակ Բ-ի վարած անկախ արտաքին քաղաքականությունը: Ժամանակի ընթացքում այդ հարաբերությունները կարգավորվեցին և կրեցին բարեկամական բնույթ: Հուլիանոսի կայսեր հռչակվելուց հետո, Արշակ Բ-ի և Հռոմեական կայսրության միջև հարաբերությունների առումով, կարծում ենք, նոր փուլ է բացվում:

ՀՌՈՄԵԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԱՐՇԱԿ Բ-Ի ՎԱՐԱԾ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հռոմում Փլավիոս Կլավդիոս Հուլիանոս (361-363 թթ.) կայսեր գահակալությամբ նոր փուլ է բացվում հռոմեա-պարսկական հակամարտության մեջ և Հայաստանի հետ հարաբերությունները դրվում են նոր հիմքերի վրա: Պատմիչ Ամմիանոսը Հուլիանոսին համարում է ինքնավստահ,

---

[1] *Տե՛ս նույն տեղում:*

[2] *Տե՛ս նույն տեղում: Տե՛ս նաև The Oxford Dictionary of Late Antiquity, v. 1, A-I, Edited by O. Nicholson, New York, 2018, p. 148.*

[3] *Տե՛ս Մովսես Խորենացի, էջ 266-267, տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 182:*

[4] *Տե՛ս Аммиань Марцелинь, в. II, XXI, 6.*

[5] *Տե՛ս Кузищин В., История древнего Рима, М., 2000, с. 336-337, Շահնազարյան Ն., նշվ. աշխ., էջ 232-233:*

[6] *Տե՛ս J. Harrel, The Nisibis War (337-363 CE): The Strategic Defense of the Roman Orient, Northridge, 2012, December, p. 98-99.*

ամբարտավան և գոռոզ անձնավորություն: Նա իրեն համեմատում էր Մակեդոնացու և Մարկոս Ավրելիոսի հետ: Մակեդոնացու օրինակով ցանկանում էր հաղթական արշավ կատարել Պարսկաստան և հասնել Ինդոսի և Գանգեսի հովիտները: Այդ պատճառով էլ, Ամմիանոսի տեղեկությամբ, իր մոտ հաշտության բանակցություններ վարելու նպատակով եկած պարսիկ դեսպաններին հոխորտանքով պատասխանում էր, թե ինքն «անձամբ պիտի գա Տիզբոն և խոսի պարսից թագավորի հետ»[1]:

362 թ., երբ Հուլիանոսը գտնվում էր Անտիոքում, Ամմիանոսի վկայությամբ, Արշակ Բ-ը մի պատգամավորություն է ուղարկում կայսեր մոտ: Դրա նպատակն էր ոչ թե խորհրդակցել Կոստանդիոսի օրոք հայ-հռոմեական դաշինքի մասին, այլ խնդրել, որ կայսրը խաղաղություն պահպանի [2]: Սա չէր նշանակում, որ Հռոմի ծավալապաշտական քաղաքականության պայմաններում հայ-հռոմեական դաշինքի մասին խոսելն դարձել էր ավելորդ: Պարզապես հայոց թագավորի համար պարզ էր, որ տարածաշրջանում երկու տերությունների միջև առկա լարվածությունն ավելի է խորանում, ինչն իր հերթին հանգեցնելու էր պատերազմի: Պատգամավորության նպատակն էր կայսրին հետ պահել հետագա ռազմական գործողությունների վերսկսումից:

Հուլիանոսն արհամարհելով խաղաղություն պահպանելու Արշակի առաջարկը՝ անմիջապես ձեռնամուխ եղավ ռազմական գործողությունների վերսկսման պարսիկների դեմ: Այդ ժամանակ արևելյան շատ ժողովուրդներ, դրանց թվում նաև հայերը, առաջարկեցին իրենց օգնությունը: Սակայն գոռոզ կայսրն ինքնավստահությամբ մերժեց օգնության բոլոր առաջարկները և հայտարարեց, թե վայել չէ, որ Հռոմեական կայսրությունն ինքն իրեն պաշտպանի օտարների օժանդակությամբ, ընդհակառակը, Հռոմն ինքն է պարտավոր իր ուժերով պաշտպանել բարեկամներին և դաշնակիցներին, երբ նրանք դրա կարիքը զգան: Հուլիանոսը միաժամանակ լուր ուղարկեց Արշակին՝ կազմել մի բանակ և սպասել իր կարգադրությանը[3]: Սա նշանակում էր, որ հռոմեական կայսրն որքան էլ գոռոզամիտ լիներ, այնուամենայնիվ նա հաշվի էր նստում հայկական գործոնի հետ՝ տարածաշրջանում ուժերի հավասարակշռությունն իր կողմը թեքելու համար:

Այս մասին կարևոր վկայություն ունի նաև Մովսես Խորենացին: Նա գրում է. «Զզօրս, զոր արձակեցեր ընդ մեզ, առեալ զորագլխի նոցին՝ ի բաց դարձաւ. և մեր բաւական էաք յանթիւ գնդացս մերոց զհետ առաքել՝ ունել զնոսա. այլ թոյլ տուաք վասն երկուց պատճառաց. առաջին՝ զի մի ասիցեն զմենք Պարսիկք, եթէ բռնութեամբ և ոչ կամաւ ածէ զզորսն, երկրորդ՝ փորձել զքո միամտութիւնդ»[4]: Պատմիչի վերոնշյալ հաղորդումը ևս փաստում է, որ չնայած կայսրը մերժել էր իրեն օգնության գնալու դաշնակից ուժերի առաջարկը, այնուամենայնիվ հայկական զորքերը միացել էին հռոմեացիներին: Համաձայն Մովսես Խորենացու այս տեղեկության՝ այդ օժանդակ զորքը հետ էր վերադարձել, ինչն առաջացրել էր կայսրի վրդովմունքը: Հայոց թագավորը պատժում է այդ զորքի զորագլուխ Զորային՝ դրանով ի ցույց դնելով իր հավատարմությունը կայսրին:

Արշակի՝ Հուլիանոսին ռազմական օգնություն ցույց տալու միջադեպի հետ կապված Հ. Հարությունյանը նշում է, որ Հուլիանոսը նախօրոք սպառնացել էր Արշակին, որ անպայման իր զորքով մասնակցի պատերազմին[5]: Հուլիանոսի սպառնալիքի մասին Ամմիանոսը չի հիշատակում և կարծում ենք, որ Հ. Հարությունյանի այդ տեսակետը ընդունելի չէ: Ընդհակառակը, պատմիչը վկայում է, որ ինչքան էլ Հուլիանոսը գոռոզ էր և ինքնավստահ, այնուամենայնիվ, նա քաջ գիտակցում էր Հայաստանի ռազմա-քաղաքական նշանակությունը այս պատերազմի մեջ, դրա համար էլ ի թիվս այլ արևելյան ժողովուրդների, նա օգնության համար դիմեց միայն Արշակ Բ-ին: Սա նշանակում է, որ ինչ-որ մի պահի հռոմեական կայսրը հրաժարվել էր հայկական օգնական զորքից, սակայն հետո վերանայել էր իր այդ դիրքորոշումը և օգնության առաջարկով դիմել էր հայոց թագավորին: Սա ևս մեկ անգամ փաստում է, թե ինչպիսի քաղաքական կշիռ ուներ Հայաստանը տարածաշրջանում, ինչը Արշակ Բ-ի խելամիտ արտաքին քաղաքականության արդյունքն էր:

---

[1] *Аммианъ Марцелинъ, в. II, XXII, 4, 5.*
[2] *Նույն տեղում, 7, 10:*
[3] *Տե՛ս Аммианъ Марцелинъ, XXIII, 2.*
[4] *Մովսես Խորենացի, էջ 253-254:*
[5] *Տե՛ս Հարությունյան Հ., նշվ. աշխ., էջ 111-112:*

363 թ. Հուլիանոսը, դուրս գալով Անտիոքից, սկսում է իր գլխավոր հարձակումը Տիզբոնի ուղղությամբ և Կիլիկիայի վրայով ներխուժում է Միջագետք: Հռոմեական բանակը պարսիկներին պատճառելով մեծ ավերածություններ՝ Եփրատի երկայնքով ուղղություն է վերցնում դեպի Սելևկիա քաղաքը, որի դիմաց գտնվում էր Տիզբոնը: Միաժամանակ, Ամմիանոսի վկայությամբ, հռոմեական այս զորամասերին պետք է միանային Արշակի կողմից ուղարկվող հայկական օժանդակ զորամասերը (սրանք Ռշտունյաց Զորա նահապետի գլավորած այն զորամասերն էին, որոնք վերևում հիշատակել էր Մովսես Խորենացին-Է.Վ.): Այս բանակի խնդիրն ավելի պատասխանատու էր դառնում, որովհետև նա պետք է Կորդուքով և Մոկաց գավառի վրայով ներխուժեր Ատրպատական և ապա ուղղություն վերցներ դեպի հարավ և միանար այն բանակին, որտեղ կայսրն էր գտնվում[1]: Սակայն Տիզբոնի պաշարման ժամանակ, կայսրի դանդաղկոտությունը, նրա զորավարներ Պրոկոպիոսի և Սեբաստիանոսի ժամանակին օգնության չհասնելը, հնարավորություն տվեցին Շապուհին վերացնել Տիզբոնի պաշարումը: Հռոմեական բանակն ընկավ դժվարին կացության մեջև պարսկական զորքերի հարվածների ներքո սկսեց անկազմակերպ նահանջել դեպի արևմուտք: Մարտերից մեկի ժամանակ՝ 363 թ. հուլիսի 26-ին, ծանր վիրավորվում և վախճանվում է Հուլիանոսը: Մովսես Խորենացին այսպես է ներկայացնում նրա վախճանը. «ամբարիշտն Յուլիանոս ըստ արժանի խորհրդոյն վէր ընկալեալ ի փորոտիսն՝ սատակի ի Պարսս: Եւ զօրացն դարձեալ, թագաւոր ունելով զՅոբիանոս, որ ի ճանապարհի վախճանեալ՝ ոչ ժամանեաց ի Բիւզանդիոն: Իսկ արքային Պարսից Շապհոյ զհետ նոցա կրթեալ»[2]:

Հուլիանոսի փոխարեն զորքը կայսր է հռչակում Հովիանոսին (363-364 թ.թ.): Ամմիանոսի վկայությամբ, պարսկական արշավանքի նախօրյակին Հովիանոսն առանց վկաների, գաղտնի կերպով իր ազգական Պրոկոպիոսին հանձնելով կայսերական ծիրանագույն թիկնոցը, պատվիրել էր, որ երբ սա կլսի իր մահվան լուրը, պետք է անմիջապես Հռոմում գրավի իշխանությունը: Հովիանոսն առանց տատանվելու շտապեց և 363 թ. հուլիսին ստորագրեց երեսուն տարի ժամկետով կայսրության համար շատ ծանր, կորստաբեր հաշտության պայմանագիր և անմիջապես ուղևորվեց Հռոմ[3]:

Ամմիանոսը գրում է, որ Հովիանոսի ճամբարը ժամանած պարսիկ դեսպաններն իրենց թագավորի հանձնարարությամբ պահանջեցին հետ վերադարձնել այն երկրները, որոնք Գալերիոս Վալերիոս Մաքսիմիանոսը (293-311 թ.թ.) պարսիկներից գրավել էր և դա վավերացրել Մծբինի 298 թ. պայմանագրով: Հռոմեացիները պարսիկներին պետք է հանձնեին Անդրտիգրիսյան հինգ երկրամասեր՝ Աղձնիքը, Մոկքը, Ծավդեքն ու Կորդուքը՝ իրենց 15 ամրոցներով, ինչպես նաև Մծբինը, Սինգարան ու Կաստրա-Մավրորումը: Շապուհի պահանջներին կայսրը դեմ չեղավ: Միակ լրացումը կայսրի կողմից այն էր, որ Մծբինն ու Սինգարան պարսիկներին պետք է հանձնվեր առանց բնակիչների[4]:

Այս մասին հետաքրքիր տեղեկություններ է պահպանել նաև Փավստոս Բուզանդը, համաձայն որի՝ Հովիանոսը համաձայնվում է Շապուհ Բ-ին տալ «զՄծբին քաղաք՝ որ է յԱրուսեստանի, և զՄիջագետս Ասորոց, և մէջ աշխարհին Հայոց. ձեռնթափ եմ, ասէ, թե կարասցես յաղթել նոցա և արկանել ի ծառայութիւն, ես ի թիկունս ոչ եկից նոցա»[5]: Ն. Շահնազարյանը նշում է, որ պարսիկներին հաջողվեց հռոմեացիներին դուրս մղել միայն Տիգրիսի ավազանից: Իսկ Մծբինի և Սինգարայի գրավմամբ էլ նրանք փրկեցին Տիզբոնը հռոմեական մշտական սպառնալիքից: Սակայն, նրանց չհաջողվեց հասնել Եփրատին, դրանով իսկ ավարտել ամբողջ Միջագետքի գրավումը: Այս շրջանի կարևոր ամրությունները մնացին կայսրության գերիշխանության ներքո[6]:

Ամմիանոսը գրում է, որ պայմանագրում արվեց շատ ավելի ծար ուխտազանց մի հավելում, ըստ որի՝ այդ համաձայնությունից հետո ընդդեմ պարսիկների այլևս չպիտի օգնություն տրվեր

---

[1] *Տե՛ս Аммианъ Марцелинъ, XXIV, 8.*

[2] *Տե՛ս Մովսես Խորենացի, էջ 253-256:*

[3] *Տե՛ս Аммианъ Марцелинъ, XXV, 6, 7; M. Errington, Roman Imperial Policy from Julian to Theodosius (Studies in the History of Greece and Rome), Chapel Hill, 2006, c. 18.*

[4] *Տե՛ս նույն տեղում, XXV, 9-12, տե՛ս նաև R. Blockley, The Romano-Persian Peace Treaties of A.D. 299 and 363, Florilegium, 1984, vol. 6, p. 34-35.*

[5] *Փավստոս Բուզանդ, էջ 212-213:*

[6] *Տե՛ս Շահնազարյան Ն., նշվ. աշխ., էջ 237:*

մեր մշտական և հավատարիմ բարեկամ Արշակին, եթե նա այդ մեզանից խնդրելու լինի[1]: Ամմիանոսն այնուհետև գրում է. «Եվ դրա հետևանքով էր, որ հետագայում երկպառակությունների և խռովությունների ժամանակ այս Արշակը կենդանի գերի վերցվեց պարսիկների կողմից»[2]: Հաշտության պայմանները Հռոմի համար այնքան նվաստացուցիչ էին, որ Ամմիանոսը 363 թ. հաշտությունն իրավացիորեն անվանել է «ամոթալի»՝ նշելով, որ ավելի լավ կլիներ տասն անգամ կռվել, քան այդ պահանջներից որևէ մեկին ընդառաջել[3]:

Այս հաշտությունը հայերի «դաշնակից» հռոմեացիները կնքեցին նշանակալից չափով ի հաշիվ Հայաստանի: Արշակը այս պատերազմում դեռ չէր պարտվել, և Շապուհը ստիպված էր պատերազմել Արշակ Բ-ի դեմ: Հայոց թագավորը, որը վարում էր ճկուն արտաքին քաղաքականություն, իր «դաշնակցի» հեռանալուց հետո մնաց միայնակ պարսկական ագրեսիայի դեմ:

ՀԱՅ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՌՈՄԵԱ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Տարածաշրջանում երկու տերությունների ազդեցության հավասարակշռությունը պահպանելու առումով Արշակ Բ-ից պահանջվում էր վարել ճկուն արտաքին քաղաքականություն: Արշակն իր արքայական թագն ստացել էր Շապուհ Բ-ից և Պարսկաստանի հետ հարաբերությունների կտրուկ սրումը կարող էր հղի լինել լուրջ հետևանքներով: Հայոց թագավորը մի կողմից փորձում էր մերձեցման եզրեր գտնել կայսրության հետ, մյուս կողմից Սասանյանների ազդեցությունից աստիճանաբար ձերբազատվելու գիծ որդեգրեց:

Քանի որ երկու տերություններն էլ փորձում էին իրենց կողմը գրավել Հայաստանը, երկրի վերնախավն դադարեց միասնական լինելուց և եռատվեց տարբեր քաղաքական ուղղություններ: Մի մասը կարծում էր, որ պետք է բարեկամական հարաբերություններ պահպանել կայսրության հետ, մյուսը՝ Պարսկաստանի հետ, իսկ երրորդը կամենում էր վարել լրիվ ինքնուրույն քաղաքականություն[4]: Պետք է արձանագրել, որ արտաքին ուժերի հարաբերակցությունն այնպիսին էր, որ հայոց թագավորը մերթ մնում էր չեզոք, մերթ հարում էր մեկին, մերթ՝ մյուսին՝ ի վերջո հայտնվելով կայսրության դաշնակցի դերում:

Արշակ Բ-ի կառավարման շրջանի հայ-պարսկական հարաբերությունների մասին Փավստոս Բուզանդը ներկայացնում է որոշակի գունազարդումով, այնուամենայնիվ, դա արժանի է ուշադրության: Դատելով պատմիչի տեղեկություններից՝ Արշակը Շապուհի հրավերով մեկնել է Պարսկաստան և արժանացել մեծ պատիվների ու արժեքավոր նվերների: Նրանք հագել էին միատեսակ զգեստներ և ինչպես հարազատ եղբայրներ, ուրախությունների ժամանակ անբաժան էին: Շապուհ Բ-ը, կամենալով Արշակին դարձնել իրեն դաշնակից, նրան առաջին հերթին պարգևեց հայոց թագավորների՝ Ատրպատականի ձեռական իշխանության երկիրը[5]: Այսուհանդերձ, Շապուհը վստահ չէր հայոց թագավորի հավատարմությանը, ուստի նրան ստիպեց սուրբ Ավետարանի վրա երդվել, որ չի խախտի ուխտն ու դաշինքը պարսիկների հետ: Բուզանդը հավաստում է, որ այս գործում, որպես միջնորդ, կարևոր դեր խաղաց սպարապետ Վասակ Մամիկոնյանի եղբայր Վարդան Մամիկոնյանը, որը վայելում էր պարսից արքայի համակրանքը՝ առաջ բերելով իր եղբայր Վասակ Մամիկոնյանի նախանձը: Վերջինս եղբոր ազդեցությունն արքունիքում թուլացնելու համար որոշեց խափանել հայ-պարսկական դաշինքը[6]: Վերոնշյալ դեպքերի թվագրության հետ կապված քննարկումներն այսօր էլ շարունակվում են: Կարծում ենք, որ պետք է համակարծիք լինել այն հեղինակների հետ, որոնք այս իրադարձությունները դնում են Արշակավանի դեպքերից առաջ (քաղաքը կառուցել էր հայոց թագավորը, որտեղ բնակություն էին հաստատել Հայոց նախարարական դասից դժգոհ մարդիկ: Ներսես կաթողիկոսի տեղապահ Խադ եպիսկոպոսը հրաժարվեց Արշակավանի եկեղեցին օծելուց, իսկ հայոց թագավորից դժգոհ

---

[1] *Տե՛ս Аммианъ Марцелинъ, XXV, 7:*
[2] *Նույն տեղում:*
[3] *Նույն տեղում, XXV, 7, 10; Моммзен Т., История римских императоров, Санкт-Петербург, 2002, с. 536-537.*
[4] *Տե՛ս «Հայոց պատմություն», ԳԱԱ հրատ., հ. Բ, գիրք Ա, Ե., 2018, էջ 93:*
[5] *Տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 194-195:*
[6] *Տե՛ս նույն տեղում:*

նախարարները հարձակվեցին քաղաքի վրա: Նրանք գրավեցի քաղաքն ու հիմնահատակ կործանեցին այն-Է.Վ.):

Այս հարցում մենք համակարծիք ենք այն տեսակետին, համաձայն որի՝ չի բացառվում, որ Վասակը դա արեց՝ ելնելով իր քաղաքական համոզմունքներից, քանի որ նա Հայաստանի անվտանգությունը տեսնում էր հայ-հռոմեական բարեկամության մեջ[1]: Հռոմեա-պարսկական պատերազմի շրջանում, ինքնուրույն արտաքին քաղաքականություն իրականացնելու ջատագով Արշակ Բ-ը, չնայած հայ-հռոմեական հարաբերությունների կարգավորմանը, երբեմն փորձում էր ջերմացնել հայ-պարսկական հարաբերությունները՝ ձգտելով տարածաշրջանում հավասարակշռություն պահպանել:

Այս մասին մեզ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Փավստոս Բուզանդը: Դատելով պատմիչի տեղեկություններից՝ Արշակն առավել հակված էր օգնելու հռոմեացիներին: Շապուհ Բ-ը նրան մշտապես հաշտության առաջարկներ էր անում և հիշեցնելով տված երդումը՝ խնդրում էր օգնական ուժերով սատարել իրեն: Արշակ Բ-ի ինքնուրույն արտաքին քաղաքականություն իրականացնելու վառ ապացույցն էր այն, որ նրա հրամանով Վասակ սպարապետը լավ զինված զորք հավաքեց, որն Արշակի գլխավորությամբ մեծ թվով նախարարների հետ սկզբում շարժվեց Մեծ Հայքի Աղձնիք աշխարհ, որտեղից հարձակվեց Արվաստանի վրա և դուրս եկավ Մծբինի մատույցներ, և մինչև պարսիկների տեղ հասնելը, նա պարտության մատնեց կայսերական բանակին[2]: Պատմիչի խոսքերով՝ Շապուհը, ժամանելով մարտադաշտ, զարմանում է և պատիվներ տալիս Արշակ Բ-ին և բոլոր մեծամեծերին: Շապուհը, հավիտենական սեր ու բարեկամություն հռչակելով իր և Արշակի միջև, առաջարկում է հետևյալը. «Տացեմ զդուստր իմ կնութիւն Արշակայ արքայի Հայոց, և տաց նմա տուն մեծ. Զի յորժամ գնասցէ ի Հայոց գալ առ մեզ, այնպէս տացուք նմա տուն, զի ի Հայոց մինչև ի Տիզբոն մինչև՝ առ մեզ համակ յիւրում տան ագցի, մինչև առ մեզ եկեսցէ»[3]:

Սակայն հայոց թագավորը տեղի է տալիս Անդովկ Սյունու խարդավանքներին: Խնդիրն այն է, որ հայոց թագավորի կինը՝ Փառանձեմը, Անդովկ Սյունու դուստրն էր: Վերջինս իմանալով Շապուհի այդ մտադրության մասին՝ խիստ անհանգստանում էր, որ այդ ամուսնությունից հետո Արշակը կբաժանվի Փառանձեմից: Երկու թագավորների միջև բարեկամությունը խափանելու համար՝ Անդովկ Սյունին սկսեց նախ կաշառել Վասակ սպարապետին, ապա մյուս մեծամեծերին, ինչպես նաև կարողացավ իրեն դավակից դարձնել Շապուհ Բ-ի մերձավոր խորհրդականներից մեկին: Անդովկը Արշակին ասում է թե իբր Շապուհը Արշակին կանչում է Տիզբոն՝ նպատակ ունենալով սպանել նրան: Արշակը խորհրդի է կանչում Վասակ սպարապետին և մյուս մեծամեծերին, ովքեր հաստատում են, որ իրենք վաղուց էին տեղյակ այդ մասին, սակայն չէին համարձակվում հայտնել արքային այդ մասին: Այդ մասին իմանալով՝ Արշակը հայոց զորքի հետ լքում է մարտադաշտը և այլևս չի վստահում Շապուհին[4]:

Այս համապատկերի վրա մենք ականատես ենք լինում մի արատավոր երևույթի: Չնայած նրան, որ Արշակը փորձում էր իր հարաբերությունները երկու տերությունների հետ կարգավորել՝ նկատի ունենալով պետական շահը, այնուամենայնիվ, տեսնում ենք, որ հայոց ներքաղաքական կյանքում առկա լուրջ խմորումները մեծապես ազդում էին արտաքին քաղաքականության վրա: Գուցե, եթե Արշակը չանսար Անդովկ Սյունու խարդավանքներին, Շապուհի հետ հարաբերությունները ավելի ջերմ բնույթ կրեին, ինչը հետագայում կարող էր ապահովել Արշակին Շապուհի հարձակումներից: Ներքաղաքական կյանքի լարվածության խորացմանը և արտաքին քաղաքականության վեկտորի փոփոխությանը նպաստեց ևս մեկ հանգամանք: Խոսքը Հայոց սպարապետի եղբայր Վարդան Մամիկոնյանի սպանության մասին է: Դատելով Փավստոսի մի հաղորդումից՝ Արշակավանի դեպքերից շատ չանցած՝ Վարդան Մամիկոնյանը Շապուհի կողմից որպես պատգամավոր (Վարդան Մամիկոնյանը վայելում էր պարսից արքայի համակրանքը-Է.Վ.)

---

[1] *Տե՛ս «Հայոց պատմություն», հ. Բ, գիրք Ա, էջ 95:*
[2] *Տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 202-212:*
[3] *Նույն տեղում:*
[4] *Տե՛ս նույնը:*

ուղարկվում է Արշակ Բ-ի մոտ՝ նրան առաջարկելով խաղաղություն ու հաշտություն: Արշակը, որպես իրատես քաղաքական գործիչ, մտադիր չէր պարսիկների հետ իր հարաբերությունները վատացնել, ուստի համաձայվում է Շապուհի առաջարկին և խաղաղությամբ արձակում Վարդան Մամիկոնյանին[1]: Այս անգամ Արշակին Շապուհ Բ-ի և Վարդան Մամիկոնյանի դեմ սկսում են գրգռել Վասակ սպարապետը և Փառանձեմ թագուհին, հավաստիացնելով, որ եթե Արշակը Վարդանին չվերացնի, ապա ինքն էլ կկորչի, հայոց թագավորությունն էլ: Ըստ երևույթին թագավորն ի վերջո հավատում է չարախոսներին և Վասակին կարգադրում զորքով գնալ ու սպանել Վարդանին: Այդ ժամանակ վերջինս տոհմական Տայքի Էրախանի ամրոցում էր և, քանի որ Վասակի զորաջոկատն էր եկել, պաշտպանության միջոցներ չի ձեռնարկում: Վասակի զինվորները, ծածուկ հարձակվելով Վարդանի վրա, սպանում են նրան[2]: Նույնիսկ այս իրադարձություններից հետո, Ամմիանոսի տեղեկությամբ, Շապուհ Բ-ը փորձում էր Արշակին իր կողմը գրավել՝ չխորշելով դա անել խաբեության, սպառնալիքների և նենգության ճանապարհով, որպեսզի խափանի նրա դաշնակցությունը հռոմեացիների հետ[3]: Արտաքին քաղաքական բարդ իրադրության պայմաններում Հայոց թագավորը գտնում էր, որ հռոմեա-պարսկական հակամարտության ծիրում Հայաստանը պետք է լինի Հռոմի դաշնակիցը:

Այսպիսով, Արշակ Բ-ը գահակալեց արտաքին քաղաքական բարդ իրադրության պայմաններում, երբ երկու հզոր տերությունների հետ հարաբերվելը նախատեսում էր ճկուն քաղաքականություն: Իր թագավորության սկզբնական շրջանում Արշակը, կարծես թե, կարողանում էր տեղավորվել այդ քաղաքականության մեջ: Նա փորձում էր իր հարաբերությունները կարգավորել և՛ Սասանյան Պարսկաստանի և՛ Հռոմեական կայսրության հետ՝ որոշ իրավիճակներում պահպանելով անգամ չեզոքություն: Արշակի այս իմաստուն քաղաքականությունը վկայում է նաև Փավստոս Բուզանդը. «Եւ իբրև հաղ քան չհաղ յաւել լինել պատերազմ, իսկ թագաւորն Հայոց Արշակ զառաջինն ինդ միտս իւր մեծամտեալ էր, և նայէր տեսանել՝ թէ ո՛վ ի նոցանէն կոչեսցէ զնա ի թիկունս օգնականութեան յաղագս գործոյ պատերազմին: Ակն ունէր, երթալ կամելով յօժարութեամբ ի թիկունս կայսերն Յունաց. իսկ նոքա ոչ կոչեցին զնա, և ոչ շուք ինչ եդին նմա և ոչ մեծարանս: Իսկ թագաւորն Պարսից Շապուհ յղէր առ նա հրեշտակս խաղաղութեան,. յուշ առնէր նմա զառաջին երդումն, ասելով՝ եթէ կամ լիցի եղբօր զի եկեսցես օգնեսցես ի գործ պատերազմիս, զի ի թիկունս հասցես քո գնդաւդ. ասէ. Թէ դու ի մեծ կոյս լինիս զի մեր լինելուց է յաղթութիւն»[4]:

Պատմիչի վերոնշյալ հաղորդումը հստակ մի բանաձև էր, ցույց տալու համար, թե հռոմեա-պարսկական հակամարտության համատեքստում ինչպիսի արտաքին քաղաքականություն իր իրականացնում Արշակ Բ-ը: Կարևորելով իր դերը տարածաշրջանում հավասարակշռություն պահպանելու համար՝ Արշակը մերթ մնում էր չեզոք, մերթ օգնում էր պարսիկներին, մերթ՝ հռոմեացիներին: Սա փաստում է այն իրողությունը, որ հանձինս Արշակի՝ մենք գործ ունենք հմուտ դիվանագետի և միջնադարյան հզոր հայոց թագավորի հետ: Ցավոք սրտի, ներքաղաքական կյանքում թագավորի գործը ձախողվեց, ինչն իր անդառնալի հետևանքներն ունեցավ և՛ թագավորության, և՛ անձամբ թագավորի համար՝ Հայաստանը դարձնելով պարսկական ավերիչ արշավանքների թատերաբեմ: Իսկ հայոց թագավորը, տեղի տալով պարսկական խարդավանքներին, իր մահկանացուն կնքեց պարսկական գերեվարության ժամանակ:

Արդի գիտական գրականության մեջ Արշակ Բ-ի հարաբերությունները Հռոմեական կայսրության ու Սասանյան Պարսկաստանի հետ ստացել են իր գնահատականները: Հետազոտողների մի մասը մանրամասնորեն ներկայացրել են այդ հարաբերությունները, սակայն որևէ գնահատական չեն տվել: Այդ հարաբերությունների գնահատության շուրջ տեսակետներ են առաջ քաշել

[1] Տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 200:
[2] Տե՛ս նույնը:
[3] Տե՛ս Аммианъ Марцелинъ, XX, 2, 11.
[4] Փավստոս Բուզանդ, էջ 203-205:

Հ. Աստուրյանը, Հ. Հարությունյանը, Ե. Մուրադյանը, Ն. Շահնազարյանը, Մ. Շահինը և այլք: Մասնավորապես Ե. Մուրադյանը[1] և Հ. Հարությունյանը[2] նշում են, որ Արշակունյաց թագավորության համար ստեղծված արտաքին քաղաքական բարդ իրադրության պարագային, Արշակ Բ-ը չեզոք դիրք է բռնում և նա արհամարհում է և՛ հռոմեական խրոխտանքը, և՛ պարսկական ատելությունը: Հ. Աստուրյանը նշում է, որ Արշակ թագավորը բավական երկար ժամանակ բարեկամական հարաբերություններ ուներ Շապուհի հետ, իսկ Հռոմի հետ հարաբերությունները լարված էին, բայց սկսած 355 թվականից, երբ տեսավ, որ պարսկական արքունիքում իր դեմ դավեր են նյութվում, բարեկամացավ Հռոմի հետ[3]: Հ. Աստուրյանի այս տեսակետը հավանաբար պայմանավորված էր նրանով, որ Արշակը թագը ստացել էր Շապուհից և գիտակցում էր իրադրության ողջ բարդությունը: Դրա համար էլ պահպանում էր լավ հարաբերություններ պարսիկների հետ: Ն. Շահնազարյանը արձանագրում է, որ այս հակամարտության համատեքստում Արշակն իր հույսերը չէր կտրում Արևմուտքից, ինչի վառ ապացույցն է՝ Ներսես կաթողիկոսի գլխավորությամբ պատվիրակության ժամանումը Հռոմ[4]: Արշակ Բ-ի արտաքին քաղաքականության մասին իր հակասական տեսակետն է հայտնել Մ. Շահինը, որը կարծում ենք ընդունելի տեսակետ չէ: Մասնավորապես նա նշում է, որ Արշակը ո՛չ դիվանագետ էր, ո՛չ պետական գործիչ, և նրա գործողությունների «սատանական բնույթը» հանգեցրեց նրան, որ Հռոմը և Պարսկաստանը համատեղ իրենց չարությունը թափեն Հայաստանի վրա[5]: Հ. Բայնեսը նշում է, որ Արշակ Բ-ը շատ անհանգստացած էր իր թագավորության պաշտպանությամբ պարսկական ագրեսիայից, և գտնում էր, որ Հռոմի հետ դաշնակցությունը կլինի իրական և արդյունավետ պաշտպանության միջոց Հայաստանի համար[6]: Ա. Եղիազարյանը նշում է, որ Արշակ Բ-ը հզորացրեց հայոց բանակը՝ թվաքանակը հասցնելով 200 հազար զինվորի: Այդ ամենի շնորհիվ նրան հաջողվեց բարձրացնել պետության հեղինակությունը միջազգային հարաբերություններում: Արդյունքում Հռոմն ու Պարսկաստանը ստիպված հաշվի էին նստում հայոց թագավորության շահերի հետ[7]:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով ներկայացվածը՝ կարող ենք արձանագրել, որ Արշակ Բ-ի վարած արտաքին քաղաքականությունը հայոց պետականության պատմության ամենաուսանելի էջերից է: Արտաքին քաղաքական բարդ իրադրության պայմաններում Հայոց թագավորը հետևում էր մի գաղափարի՝ պետության հզորացմանը, որին էլ միտված էր արտաքին հարաբերություններում նրա յուրաքանչյուր քայլը: Այդ քայլերի շնորհիվ հայոց թագավորին հաջողվեց բարձրացնել հայոց թագավորության հեղինակությունը միջազգային հարաբերություններում, որի արդյունքում Հռոմն ու Պարսկաստանը հաշվի էին նստում հայոց թագավորության շահերի հետ:

Эдгар Варшамян, АРМЕНИЯ В РАЗГАР РИМСКО-ПЕРСИДСКОГО КОНФЛИКТА: ВНЕШНЯЯ ПОЛИТИКА АРШАКА II. В статье представлен материал, обобщение которого позволяет утверждать, что проводимая Аршаком II внешняя политика - одна из самых поучительных страниц истории армянской государственности. В условиях сложной международной обстановки армянский царь был верен идее укрепления государства, и каждый его шаг во внешних отношениях служил этой цели. Благодаря этим шагам армянскому царю удалось поднять авторитет своего царства в международных отношениях, в результате чего Рим и Персия считались с интересами Армении.

---

[1] *Տե՛ս Մուրադեան Ե., նշվ. աշխ., էջ 38-40:*
[2] *Տե՛ս Հարությունյան Հ., նշվ. աշխ., էջ 111:*
[3] *Տե՛ս Աստուրեան Հ., նշվ. աշխ., էջ 283-284:*
[4] *Տե՛ս Շահնազարյան Ն., նշվ. աշխ., էջ 228:*
[5] *Տե՛ս M. Chahin, The Kingdom of Armenia, New York, 1987, p. 257.*
[6] *Տե՛ս H. Baynes, Rome and Armenia in the Fourth Century, The English historical review, 1910, Oct., v. XXV, p. 630.*
[7] *Տե՛ս Եղիազարյան Ա., Հայոց պետականության պատմության ուսանելի էջերից. Արշակ Բ-ի դարաշրջանը, էջ 20:*

Ключевые слова: *армяно-римские отношения, армяно-персидские отношения, римско-персидский конфликт, Аршак II, Констанций II, Шапур II, внешняя политика, Армения.*

Edgar Varshamyan, ARMENIA IN THE MIDST OF THE ROMAN-PERSIAN CONFLICT: THE FOREIGN POLICY OF ARSHAK II. Summarizing the presented, we can inscribe, that the foreign policy pursued by Arshak II is one of the most instructive pages in the history of the Armenian statehood. Under difficult international conditions the Armenian king was following an idea of strengthening the state, by his every step in foreign relations. Thanks to these steps, the Armenian king managed to raise the reputation of the Armenian kingdom in international relations, as a result of which Rome and Iran took into account the interests of the Armenian kingdom.

Key words: *Armenian-Roman relations, Armenian-Persian relations, Roman-Persian conflict, Arshak II, Constantius II, Shapur II, foreign policy, Armenia.*